

ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ-ն ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-ՀՁ-22/1 ծածկագրով կազմակերպված Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
2	<p>Համազգեստ /Իգական սեռի ծառայողների/ - 25 լրակազմ Կիտել՝ միափեղկ, ամենօրյա (համապատասխան լրակազմ ուսադիրներով և թևքանշանով), մուգ կապույտ, կիսաբրդյա (317գ/մք ±3% խտությամբ 67%բուրդ ±3%, 33%Պ/Է ±3%) կտորից, մարմինը կիսագրկող մակերեսով, հետ ծալված օձիքով և սովորական երկկարանի թևքերով, ձախ թևքին կարվում է թևքանշան, որոնք ներքևի հատվածում ունեն 2,5 մմ լայնությամբ կարմիր եզրակար, կողքերից ունի կափույրով ծածկվող թեք կտրվածքով ներկարված գրպաններ, դեպի ձախ կոճկոկում միաշարք երեք ոսկեգույն մեծ կոճակներով՝ կնգումի սպիտակ մորթու պատկերով: Կիտելը առաջամասից կրկնակարվում է սոսնձող կտորով, իսկ կրծքամասում՝ սոսնձող կտորով և վուշ-բրդյա քաթանով: Առանձին դետալները նույնպես՝ գրպանների կափույրներ, օձիք կրկնակարվում են սոսնձող կտորով և վուշ-բրդյա քաթանով: Աստառը՝ 90 գ/մք ±3% խտությամբ մուգ կապույտ կտորից-20 հատ: Կիտել՝ երկփեղկ, ամենօրյա (համապատասխան լրակազմ ուսադիրներով և թևքանշանով), մուգ կապույտ (317գ/մք ±3% խտությամբ 67%բուրդ ±3%, 33%Պ/Է ±3%) կտորից, մարմինը կիսագրկող մակերեսով, հաստ փողքերով, հետ ծալված օձիքով և սովորական երկկարանի թևքերով, ձախ թևքին կարվում է թևքանշան, որոնք ներքևի հատվածում ունեն 2,5 մմ լայնությամբ կարմիր եզրակար, կողքերից ունեն կափույրով ծածկվող կտրվածքով ներկարված գրպաններ, երկու կողմերում ունի ծոցագրպան: Կիտելը առաջամասից կրկնակարվում է սոսնձող կտորով, իսկ կրծքամասում՝ սոսնձող կտորով և վուշ-բրդյա քաթանով: Առանձին դետալները նույնպես՝ գրպանների կափույրներ, օձիք կրկնակարվում են սոսնձող կտորով և վուշ-բրդյա քաթանով: Աստառը՝ 90 գ/մք ±3% խտությամբ մուգ կապույտ կտորից: Երկկոճկուն (երկփեղկ)՝ 6 ոսկեգույն</p>

այլումինե համաձուլվածքով մեծ կոճակներով՝ կնգումի սպիտակ մորթու պատկերով տեղադրված երկշարք, թիկնամասի ներքևում՝ առանց կտրվածքի-5 հատ: Բաճկոն՝ մուգ կապույտ /համապատասխան լրակազմ ուսադիրներով/ (2ինվորական քննչական գլխավոր վարչության համար՝ մուգ կանաչ գույնի), 236գ/մք խտությամբ $\pm 3\%$, 44-տոկոսանոց բուրդ $\pm 3\%$, 54-տոկոսանոց պոլիէթիլեն $\pm 3\%$, 2-տոկոսանոց լայկրա $\pm 3\%$ կտորից, կոճկվում է կենտրոնական շղթայով, հետևամասը և առաջամասը՝ վերին կտրվածքով, լանջափեշերի վրա վերևից ուղղահայաց վրադիր գրպաններ են՝ ուղղանկյուն կափույրներով: Բաճկոնի կողային գրպանները՝ շեղակի կտրվածքով, շղթայով կոճկվող: Բաճկոնի թևքերը նեղ թեգանիքներով, Էլաստիկ ժապավենով են: Օձիքը՝ ծալովի: Բաճկոնը գոտիով է՝ կողքերից Էլաստիկ ժապավենով ձգված: Ուսադիրների շրջանում՝ երկու փակօղակներ և երկու կամրջակներ՝ ուսադիրների ամրացման համար: Ձախ թևի ուսակարից 90 մմ ներքև՝ ջակարդե արծաթագույն թելով ասեղնագործ թևքանշան՝ ՀՀ քննչական կոմիտեի խորհրդանիշի պատկերով, 4.5 սմ շառավիղով, Կիսաշրջագգեստ՝ մուգ կապույտ կիսաբրդյա (317գ/մք խտությամբ $\pm 3\%$ 67% բուրդ $\pm 3\%$, 33% Պ/Է $\pm 3\%$) կտորից, ուղիղ կարվածքով, երկկողմանի սեղմոններով, աստառով, գոտին՝ գոտեմակօղերով, հետևամասում՝ բացվածքով, կողամասում կոճկվում է մեկ կոճակով և շղթայով: Տաբատ՝ մուգ կապույտ գույնի (317 գ/մք խտությամբ $\pm 3\%$, 67% բուրդ $\pm 3\%$, 33% Պ/Է $\pm 3\%$) կտորից, ուրվագիծը՝ ուղիղ, առանցծալքերի, 2,5 մմ լայնությամբ կարմիր եզրակարով, գոտին գոտեմակողերով, որոնցից մեկը պետք է գտնվի գոտկատեղի հետևամասի կարի վրա: Գուլֆիկը մշակվում է շղթայով և կոճկվում է երկու կոճակով, արտաքին գրպանները թեք են: Գլխարկ(պիլոտկա)՝ Մուգ կապույտ կիսաբրդյա (317 գ/մք խտությամբ $\pm 3\%$, 67% բուրդ $\pm 3\%$, 33% Պ/Է $\pm 3\%$) կտորից: Կազմված է երկարացված հատակի 2 մասից, 2 պատից և 2 փեշիկից: Վեր ծալված եզրակարերն ավարտվում են կարմիր մահուդե եզրակով (կանտով): Ձախ կողմում ունի 3 օդանցք: Առջևի կենտրոնական ճակատային մասում ամրացվում է մետաղից պատրաստված ոսկեգույն գլխարկանշան՝ քննչական կոմիտեի խորհրդանիշի շրջանակաձև կենտրոնի ոսկեգույնով երիզված վահանը՝ պատված կնգումի (հայկական կգաքիսի) սպիտակ մորթու պատկերով: Փողկապ՝ մուգ կապույտ,(35% բուրդ $\pm 3\%$, 65% պ/Է $\pm 3\%$, 294գ/մք $\pm 3\%$ խտությամբ) կտորից, 2 շեղանկյունաձև՝ լայն, կարճ և նեղ, երկարավուն կտորներից, որի նեղ, երկարավուն կտորը գտնվում է լայն, կարճ կտորի վրա: Հանգույցի ներքևի կենտրոնական մասում ամրացվում է Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի խորհրդանիշի շրջանակաձև կենտրոնի ոսկեգույնով երիզված վահանը՝պատված կնգումի (հայկական կգաքիսի) սպիտակ մորթու պատկերով:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО Канакери кари фабрика в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-
ՀՁ-22/1 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
2	